ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔ

ք. Վեդի

29 մայիսի 2024թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՄԻՋՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՄ ԱՆԴՐՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹՈՒՄ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՆՈՐ ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԵՐԹՈՒՂԻ» ԾՐԱԳՐԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2024 թվականի մայիսի 29-ին, ժամը 15:00-ին Վեդու համայնքապետարանի նիստերի դահլիճում (ք. Վեդի, Թումանյան 6), տեղի ունեցավ Եվրոպայի խորհրդի կողմից իրականացվող միջհամայնքային կամ անդրսահմանային համագործակցության տեխնիկատնտեսական ուսումնասիրությունների դրամաշնորհային մրցույթում հաստատված նոր զբոսաշրջային երթուղի ծրագրի վերաբերյալ հանրային լսում:

Հանրային լսմանը մասնակցում էին, համայնքապետարանի աշխատակիցներ, ֆիզիկական անձինք, Վեդի համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի վարչական ղեկավարներ:

Հանրային լսման ընթացքը արձանագրում էր աշխատակազմի քարտուղարի պարտականությունները կատարող՝ Ա. Մովսիսյանը:

Հանրային լսման օրակարգի թեման էր՝

Նոր զբոսաշրջային երթուղու նախագծի մշակման քննարկում

Համայնքապետարանի գլխավոր մասնագետ /զարգացման ծրագրերի և ներդրումների գծով/ Ռուզաննա Գաբրիելյանը ներկայացրեց նոր զբոսաշրջային երթուղու ընդհանուր նկարագիրը, ծրագրի նպատակը և աշխատանքային պլանով նախատեսված գործողությունները:

Հանրային քննարկմանը ներկայացած բոլոր ներկաներին և շահագրգիռ անձանց առաջարկվեց հանդես գալ թեմային առնչվող հարցերով և առաջարկներով: Մասնակիցներից մեկը հարց բարձրացրեց, արդյո՞ք Վեդու ջրամբարը կներառվի զբոսաշրջային երթուղու մեջ, թե ոչ:

Ի պատասխան նշվեց, որ առաջիկայում կքննարկվի, երբ հայտնի կլինի ջրամբարի գործարկման հստակ օրը:

Քննարկված հարցեր և առաջարկություններ.

Ռուզաննա Գաբրիելյանը քննարկման ավարտից հետո ամփոփեց և պարզաբանեց բոլոր հարցերն ու առաջարկությունները: Հայտարարեց, որ դրանք կուսումնասիրվեն և առաջարկեց լրացուցիչ առաջարկների դեպքում դիմել ծրագրի համակարգողին:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ